ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՐՈՆԶԵ ԻՐԵՐ ԿԱՄՈՅԻՑ

1980 թ. Կամո քաղաքի կենտրոնական մասի բլրի հարավային լանջում, հողային աշխատանքների ժամանակ, պատահաբար, հայտնաբերվել է դամբարանագաշա, որը զբաղեցնում էր մոտ

Թասի կենտրոնում, բրոնզի կանաչավուն շերտը մաքրելուց հետո, պարզ երևաց առյուծի գլխի ոչ ամբողջական պատկեր, շուրջը՝ ուրարտերեն արձանագրություն, քիչ վերևում՝ կենաց



1000 քառմ. տարածություն (20×50մ.)։ Դամբարանագաշտը թյուրիմացաբար ոչնչացվել է, իսկ դամբարաններում եղած նյութերից պահպանվել են միայն բրոնզե թասի մի բեկոր և ձիու ոչ ամբողջական մեկ ճակատակալ (նկ. 1)։

ծառի պատկերով կենտրոնից դեպի թասի եզրը ձգվող աշտարակ։ Ե՛վ պատկերները, և՛ սեպագրերը արված են դրվագման եղանակով։ Բրոնզե թասի վրա դրվագված են ri-iš-ḫu-se-e *սեպերը, որը, անկասկած,* ū-ri-iš-ḫu-se-e *«զի-*

նանոց», «գանձարան» բառն է։ Քանի որ թագավորի անունը չի պահպանվել, ուստի հետաքրքիր է, թե ո՞ր թագավորի զինանոցին է պատկանել այն։

Արձանագրությամբ բրոնզե թասեր մինչ այժմ գտնվել են Մինուայի (810—786 թթ. մ. թ. ա.) և նրա հաջորդներ Արգիշթե I-ի (786—764 թթ. մ. թ. ա.), Սարդուրե II-ի (764—735 թթ. մ. թ. ա.), Ռուսա I-ի (735—713 թթ. մ. թ. ա.) անուններով։ Կարմիր բլուրից հայտնաբերված բազմաթիվ բրոնզե թասերից վեցն ունեն [I]Mi-nu-a-i-né-e-i ú-ri-iš-ḫu-si-né-e-i[1] «Մինուայան զինանոցայինի» արձանագրությունը, որտեղ urišḫusine բառը տրված է եզակի թվի սեռական հոլովով և թարգմանվում է «զինանոցայինի» այսինքն՝ «Մինուայան զինանոցայինի (թասերից)»։ Արգիշթե I-ի անունով գտնված բրոնզե թասերն ունեն [I]Ar-giš-ti-né ú-ri-iš-ḫu-ši-né[2] «Արգիշթեի զինանոցի» (եզակի թվի բացառական-գործիական հոլով) և NÍG [I]Ar-gi-iš-te-e[3] «Արգիշթեի սեփականությունը» արձանագրությունները, իսկ Սարդուրե II-ի անունով հայտնաբերված մի քանի տասնյակի հասնող բրոնզե թասերի արձանագրությունները եզակի թվի ուղղական առաջին հոլովով են և ունեն [ID]Sar$_5$-du-re-e [É]ú-ri-iš-ḫe[4] «Սարդուրե. զինք (=զինանոց)» NÍG·(GA) Sar$_5$-du-re-e/i[5] «Սարդուրեի սեփականությունը» իմաստները։ Միայն Ռուսա I-ի անունով բրոնզե թասերի վրա կան [I]Ru-sa-i-né-e ú-ri-iš ḫu-se-e և [I]Ru-sa-i-né-e [É]ú-ri-iš-ḫu-se-e[6] արձանագրությունները, որոնցում վկայված [É]ú-ri-iš-ḫu-se-e բառը գրությամբ նման է մեզ հետաքրքրող բեկորի վրայի [ú]-ri-iš-ḫu-se-e բառի գրությանը (արված եզակի թվի ուղղական առաջին հոլովով), ինչպես նաև Ռուսա I-ի հիշյալ թասերի վրա եղած առյուծի և աշտարակի պատկերները, կենաց ծառով հանդերձ, ամբողջովին համընկնում են վերոհիշյալ թասի պատկերներին։ Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ նորահայտ թասի բեկորը պատկանում է Ռուսա I-ին։ Թեև ձիու բրոնզե ճակատակալի վրա ևս նշմարվում են արձանագրության հետքեր, սակայն այն վերծանել հարավոր չէ և միայն կարելի է ենթադրել, որ այդ ճակատակալը ևս ունեցել է Ռուսա I-ի անվամբ արձանագրություն։ Նման ճակատակալներ հայտնաբերվել են ոչ միայն Հայկական լեռնաշխարհի տարածքում, այլև նրա սահմաններից դուրս։ Ուրարտական շրջանի այս իրերը, հավանաբար, Սևանի լճի ավազան են հասել ուրարտական զորքերի հետ միասին։ Առաջին անգամ այդ շրջանները, այն է՝ [KUR]ú-e-le-ku-né-/ḫe «Վելեքունե/խ»—Գեղարքունի[8] երկրի և նրա արքայական քաղաքի գրավումը, հիշատակվում է Սարդուրե II-ի տարեգրության մեջ[9]։ Սարդուրե II-ից հետո նույն շրջանները վերագրավել և հենց արքայական քաղաքի տեղում էլ «հոյակապ ամրոց», «խալդական քաղաք» է կառուցել Ռուսա I-ը[10]։

Ուրարտական արձանագրությամբ այս իրերը հետաքրքրական են տվյալ դամբարանների ժամանակագրությունը պարզելու առումով և, եթե պահպանված լինեին դամբարաններում եղած մյուս նյութերը, ապա, անկասկած, դրանց համատեղ ուսումնասիրությունը կնպաստեր շատ հարցերի պարզաբանմանը։

ՎԱՀԱՆ ԳԱՑՍԵՐՅԱՆ

---

[1] urišḫuse բառի թարգմանությունը տալիս ենք ըստ՝ Մ. Ա. Իսրայելյան, Կարմիր-բլուրի նորագյուտ արձանագրությունները (ան. Մառի անվան կաբինետի աշխատություններ, հ 2, Երևան, 1947, էջ 215—224), հմմտ. Б. Б. Пиотровский, Кармир-Блур, II (այսուհետև՝ КБ), Ереван, 1952, с. 55—56; Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), М., 1960, № 112—117.

[2] КБ, II, с. 55—56; УКН, № 151.

[3] КБ, II, с. 55—56; УКН, № 152.

[4] КБ, II, с. 55—56; УКН, № 177—190.

[5] КБ, II, с. 55—56; УКН, № 191—259.

[6] КБ, II, с. 55—56; УКН, № 270—274, 274 a—c. 274d.

[7] Գ. Ա. Տիրացյան, Ուրարտական հնություններ Իրանում («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 291—294)։

[8] Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 167։

[9] УКН, № 156; D I + D II, տող 1—30, № 155, F, տող 17—19:

[10] УКН, № 265.